ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | ՀՕ-155 | *Տեսակը* | Պաշտոնական Ինկորպորացիա |
| *Տիպը* | Օրենք | *Կարգավիճակը* | Գործում է մասնակի |
| *Սկզբնաղբյուրը* | ՀՀՊՏ 1997.12.03/27 | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | ՀՀ Ազգային ժողով | *Ընդունման ամսաթիվը* | 30.09.1997 |
| *Ստորագրող մարմինը* | ՀՀ Նախագահ | *Ստորագրման ամսաթիվը* | 27.11.1997 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 01.01.1998 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

**Ծանուցում**

04.10.16 ՀՕ-165-Ն օրենքի 445-րդ հոդվածի համաձայն, սույն օրենքն ուժը կորցնում է 01.01.18 թվականին, բացառությամբ օրենքի 8-րդ և 11-րդ հոդվածների նախավերջին պարբերություններով «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրված ռեզիդենտներին վերաբերող դրույթների, որոնք գործում են մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

**Կապեր այլ փաստաթղթերի հետ**

**Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

# ՀՀ ՕՐԵՆՔԸ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
*30 սեպտեմբերի 1997 թ.*

## ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

*(օրենքը մասնակի ուժը կորցրել է 04.10.16 ՀO-165-Ն օրենքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն)*

## Բ Ա Ժ Ի Ն 1

## ՀԱՐԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԸ

## Գ Լ ՈՒ Խ I

## *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

### Հոդված 8. Եկամուտ չհամարվող տարրերը

Սույն օրենքի իմաստով եկամուտ չեն «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հավաստագրված ռեզիդենտների կողմից հավաստագրի գործողության ժամկետում տեղեկատվական տեխնոլոգիաների իրացումից ստացվող եկամուտները:

***(8-րդ հոդվածն ուժը կորցրել է մասնակի՝ նախավերջին պարբերությունը գործում է մինչև 31.12.2022 թ. համաձայն 04.10.16 ՀO-165-Ն օրենքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի)***

### Հոդված 11. Ծախս չհամարվող տարրերը

ը) «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հավաստագրված ռեզիդենտների կողմից հավաստագրի գործողության ժամկետում տեղեկատվական տեխնոլոգիաների իրացումից ստացվող եկամուտների ստացման հետ կապված ծախսերը.

***(11-րդ հոդվածն ուժը կորցրել է մասնակի՝ նախավերջին պարբերությունը գործում է մինչև 31.12.2022 թ. համաձայն 04.10.16 ՀO-165-Ն օրենքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի)***

**Հայաստանի Հանրապետության**
**Նախագահ**

**Լ. Տեր-Պետրոսյան**

Երևան
27 նոյեմբերի 1997 թ.
ՀO-155